

**ԳԷՈՐԳ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՀԵՌԱԳԻՐԸ ԵՒ
ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐՈՒ 1915Ի ՄԱՅԻՍԵԱՆ
ՄԻԱՑԵԱԼ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ**

ԶԱԻԷՆ ՄՍԸՐԼԵԱՆ

Համաշխարհային Առաջին Պատերազմին բռնկումը առիթ մը տուաւ Օսմանեան Կայսրութեան իշխանութեան գլուխը գտնուող Երիտասարդ թուրք Կուսակցութեան որ պետական միջոցներով իրականացնէր կանխամտածուած ու ծրագրուած ցեղասպանութիւնը հայութեան, որ կ'ապրէր Արեւմտեան Հայաստանի, Փոքր Հայքի, Կիլիկիոյ եւ Օսմանեան այլ հողամասերու վրայ:

Օսմանեան Կայսրութեան Համաշխարհային Առաջին Պատերազմի մուտքէն քիչ ետք սկսան ջարդերը Օսմանեան Կայսրութեան տարածքին վրայ, մանաւանդ անոր արեւելեան սահմաններուն մօտակայքը գտնուող շրջաններուն մէջ եւ մասնաւորապէս նորոգ գրաւեալ Արգուինի¹, Էրզրումի նահանգին հայկական գիւղերուն², Ալաշկերտի շրջանին մէջ եւ այլուր³:

Թէեւ հայերն ու մեծ պետութիւններէն ոմանք ունէին այն վախը թէ լայնածաւալ ջարդեր կը ծրագրուէին՝ մինչ այդ գաւառներէն հասնող սպանդի լուրերը տակաւին չէին հասած այդ վախը լրիւ արդարացնելու տարողութեան:

Հազար ինն հարիւր տասնհինգի Մարտ եւ Ապրիլ ամիսներուն Հայոց կացութիւնը վատթարացաւ Արեւելեան Նահանգներուն մէջ: Այլ յստակ կերպով կը տեսնուէին նախանշանները Օսմանեան Կայսրութեան իթիբի-հատական կառավարութեան ցեղասպանական ծրագիրին: Սպանդն սկսեր էր եւ կը շարունակուէր Ալաշկերտի, Պիթլիսի, Էրզրումի եւ Վանի նահանգներու հայկական կարգ մը գիւղերուն մէջ⁴, երբ անդին՝ 8 Ապրիլ 1915ին կը սկսէր տեղահանութիւնը Զէյթունի հայոց⁵:

Վանայ նահանգին Ականց գիւղին մէջ 2500 հայ տղամարդիկ կը զըն-

դակահարուէին 19 Ապրիլին⁹, մինչ 24000 Հայեր կը սպաննուէին նոյն նահանգի այլ գիւղերու մէջ¹⁰: Ասոնց կը յաջորդէր սպաննութիւնը Վանէն պետական երեսփոխան Վառամբանի, կուսակցական ղեկավար Իշխանի եւ այլոց: Այս եղեռնագործութիւններէն ետք էր որ կը սկսէր Վանի հերոսական ինքնապաշտպանութիւնը 20 Ապրիլ 1915ին, որ պիտի տեւէր մինչեւ 16 Մայիս 1915 թուականը⁸:

Նախքան Հայաստանի մէջ զանգուածային ջարդերն ու տեղահանութիւնները՝ լուրեր հասեր էին Թիֆլիսի հայ ազգային ղեկավարութեան տեղի ունեցող մասնակի ջարդերու եւ սպանութիւններու մասին: Առ այդ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե. Կովկասի փոխարքայ Վորոնցով-Դաշկովի արտօնութեամբ, 20 Ապրիլ 1915ին ղիմեց Իտալիոյ Վիթթոր-էմմանուէլ Գ. թագաւորին եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահ Ուուտրօ Ուիլսընին, որպէս չէզոք երկիրներու ղեկավարներու, որ միջնորդեն Բարձրագոյն Դրան մօտ Հայոց պաշտպանութեան համար⁹: 22 Ապրիլին Ռուսիոյ արտաքին գործոց նախարարը հրահանգեց Ուաշինկթընի եւ Հռովմի մօտ Ռուսիոյ ներկայացուցիչներուն նեցուկ կանգնիլ Գէորգ Ե. Կաթողիկոսի ղիմումին¹⁰:

Դաշնակից ուժերու Կալիփոլիի ցամաքահանման նախօրեակին, 23էն 24 Ապրիլի գիշերը, օսմանեան Երիտասարդ Թուրք իշխանութիւնները ձերբակալեցին 270 հայ ղեկավար ու մտաւորական՝ անդեկ եւ առանց առաջնորդի ձգելու համար հայութիւնը Օսմանեան Կայսրութեան ամբողջ տարածքին, իսկ հայկական գաւառներուն մէջ սաստկացան ջարդերը, որոնք արդէն տեղի կ'ունենային. առ այդ՝ Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սազոնով հեռագրեց Փարիզի եւ Լոնտոնի մօտ Ռուսիոյ ղեսպաններուն, թէ ըստ իր նախարարութեան ստացած նորանոր տեղեկութիւններուն՝ քոստային վիճակ կը տիրէր Ասիական Թուրքիոյ մէջ եւ թէ թուրքերն ու քիւրտերը կը կոտորէին հայերը, ուստի անհրաժեշտ էր անոնցմէ իւրաքանչիւրին համար անջատարար ղիմել իր ներկայացուած երկրին՝ Մեծն Բրիտանիոյ եւ Ֆրանսայի կառավարութիւններուն, որ միատեղ հրապարակէին Բարձրագոյն Դուռ ուղղուած ղիմում մը եւ նշէին թէ հայերու կորուստին համար անձնապէս պատասխանատու պիտի նկատուէին թուրք կառավարութեան անդամները՝ ինչպէս նաեւ քաղաքական ու զինուորական պաշտօնատարները¹¹:

Անգլիական կառավարութիւնը հրահանգեց Հռովմի եւ Ուաշինկթընի իր ղեսպաններուն նեցուկ կանգնիլ իրենց ուրս պաշտօնակիցներուն՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե.ի հեռագրին կապակցութեամբ¹², սակայն 29 Ապրիլին վերահասու դառնալէ ետք Սազոնովի 25 Ապրիլի միացեալ յայտարարութեան փափաքին՝ Բրիտանական Ֆորէյն Օֆիսը պատեհ նկատեց սպասել ու տեսնել թէ ի՞նչ պիտի ընէին իտալական եւ ամերիկեան կառավարութիւնները¹³: Քանի մը օր ետք, 2 Մայիս 1915ին, իտալական կառավարութիւնը հրահանգեց Կոստանդնուպոլսոյ մօտ իր ղեսպանին ղի-

մում կատարել թրքական կառավարութեան հայկական ջարդերը կասեցնելու առնչութեամբ: Նոյնհետայն նոյնանման դիմումներ կատարեցին ամերիկեան եւ պուլկարական դեսպաններն ալ¹⁴:

Մինչ այդ՝ կացութիւնը վատթարացեր էր արդէն եւ հայոց դէմ ծրագրուած ցեղասպանութիւնը լրիւ թափով գործադրութեան գրուեր: Վանի նահանգէն մեծամեծ դժուարութիւններով մահէն ճողոպրածներէն եւ այլազան ակնատեսներէն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե.ը իրագեկ դարձաւ ահաւոր եղելութիւններուն, զորս վկայելու կու գայ Մայր Աթոռի դիւանապետ Բագրատ Եպիսկոպոսի համար 708 եւ 21 Ապրիլ/4 Մայիս 1915 թուակիր նամակը, զոր ուղղուած կը գտնենք Փարիզի հայոց եկեղեցւոյ Վռամշապուհ Աւագ Քահանայ Քիպարեանին եւ Հայոց Յանձնաժողովին, եւ որ կը հաղորդէր ի միջիայլոց, թէ «նորից Տաճկա—Հայաստանում հազարաւոր անմեղ հայերի արիւնն է հոսում: Տաճկաց տմարդի կառավարութիւնն այժմեան քաղաքական պայմաններում իրեն միանգամայն ազատ համարելով ամենայն տեսակ պատասխանատուութիւններից, քաղաքակիրթ աշխահի՛ յատկապէս Ռուսաստանի, Անգլիայի եւ Ֆրանսայի վերահսկողութիւնից եւ միջազգային պարտաւորութիւններից, սկսել է իրագործել իւր սոսկայի ծրագիրը, քրտական աւազակախմբերի եւ բաշիրոզուկ պաշտօնեաների ձեռքով հայաշատ վիլայէթներում կազմակերպել կոտորածներ: Հաստատ աղբիւրից տեղեկութիւն ստացուեց, որ տաճիկ կառավարութեան դաւադիր պաշտօնեաները իրենց յատուկ խարէութեամբ հաւաքել են բազմաթիւ գիւղերից խաղաղ ու անզէն հայ գիւղացիներին գինուորակոչի պատրուակով եւ զնդակահարել եւ կոտորել են հազարաւորներին»¹⁵:

Ի տես այս կացութեան, իր հեռագիրէն ՆԱ օր ետք, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե.ը հեռագիրներ ղրկեց Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Սազոնովին, Անգլիոյ Ճորճ Ե. Թագաւորին, եւ Ֆրանսայի Հանրապետութեան նախագահ Բէյմոն Փուանքարէին, որ ցոյց տային իրենց պաշտպանութիւնը հայ ազգին՝ «իրենց դեսպանների միջոցով չէզոք պետութեանց վրայ ազդելով առաջն առնելու [համար] Տաճկա—Հայաստանում կատարուող անգթութիւնների, սիստեմաթիք կոտորածի եւ կազմակերպուած թուրք—քրտական աւերումների»¹⁶:

Գէորգ Ե. Կաթողիկոսին հեռագիրը որ առաքուեցաւ Մեծն Բրիտանիոյ Ճորճ Ե. Թագաւորին՝ Պաքինկհամի Պալատը հասաւ 6 Մայիս 1915ին եւ այժմ կը գտնուի Ֆորէյն Օֆիսի արխիւներուն մէջ: Այդ հեռագիրը կ'ըսէր.

«Նորին Վեհափառութիւն Ճորճ Ե. Թագաւոր Անգլիոյ,
Լոնտոն.

«Թրքահայաստանէն վերջերս հասած ահազանգիչ լուրերէ ետք թէ

ջարդերը վերսկսած են եւ կազմակերպուած ճնշումներ կը սպառնան գոյութեանը Թրքահայաստանին եւ հայ ժողովուրդին՝ այժմու շատ ծանր վայրկեանին կը դիմենք Ձերդ Վեհափառութեան մարդասիրական վեհ զգացումներուն եւ մարդկութեան եւ քրիստոնէութեան անունով կոչ կ'ուղղենք եւ յարգալից կը խնդրենք Ձեզմէ, որ ազնիւ ըլլաք հրահանգելու դիւանագիտական Ձեր ներկայացուցիչներուն, որոնք մօտն են չէզոք պետութեանց, իրենց ազդեցութեամբ վերջ մը դնել տալու Թուրքիոյ մէջ թրքական կատաղութեան եւ մոլեռանդութեան թողլքուած իմ ժողովուրդիս դէմ ահաւոր հալածանքին:

«Գէորգ Ե.

«Մայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց»¹⁷

Հեռագիրի ստացումէն միայն վեց օր ետք էր որ Մեծն Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար Սըր Էտուրրտ Կրէյը Էջմիածին ղրկեց Հետեւեալ չափազանց զուսպ հեռագիր պատասխանը, որ կ'ըսէր թէ «Ինծի հրահանգուած է Նորին Վեհափառութիւն Թագաւորին կողմէ իմաց տալ ձեզի թէ ստացուած է Ձերդ Սրբազանութեան ընթացիկ [ամսու] 4ի հեռագիրը, եւ յայտնել թէ Թուրքիոյ հայերու կացութիւնը գրաւած է ուշադրութիւնը Նորին Վեհափառութեան կառավարութեան. Կրէյ»¹⁸:

Երբ իր քաղաքական շահերէն մեկնած եւ նկատի առնելով որ 150,000է աւելի ռուսահայեր կային իր բանակներուն մէջ՝ Ռուսիան ամէն գնով կ'ուզէր ազդարարող յայտարարութիւն մը հրապարակել օսմանեան թուրքերուն դէմ Անգլիոյ եւ Ֆրանսայի համագործակցութեամբ՝ Անգլիան կը դանդաղէր: Բրիտանական կառավարութիւնը կը խորհէր, թէ նման ազդարարագիրի մը համար «բաւականին վստահելի տուեալներ» չունէր ի ձեռին եւ կը կարծէր թէ այդ մէկը օգուտէ աւելի կրնար վնաս հասցնել եւ մղել թուրքերը որ ըլլային աւելի «վրէժխնդիր»¹⁹: Այսուհանդերձ շարունակուեցան ռուսական ճնշումները, եւ Լոնտոնի մէջ ռուսական դեսպանը բացատրեց Կրէյին, թէ ռազմական պատճառներով եւ «Ռուսիոյ հայերուն գոհացում տալու համար» անհրաժեշտ էր ռուսական կառավարութեան համար յայտարարութիւնը հրապարակային նման ազդարարագրի մը²⁰: Մինչ այդ, սակայն, 15 Մայիսին Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սազոնովը հրահանգեց Լոնտոնի մէջ ռուսական դեսպանին, թէ «բարեհաճեցէք [ձեզ] հաւատարմագրուած կառավարութեանը վերստին մատնանշել, որ ցանկալի է ու ճիշդ ժամանակն է հրապարակել Բ[արձրագոյն] Դրանն ուղղուած համատեղ յայտարարութիւն, որը, եթէ նոյնիսկ նրա վրայ պատշաճ տպաւորութիւն չգործի, յամենայն դէպս կը բարձրացնի հայերի ոգին, որոնք մեզ կարող են օգտակար լինել Թուրքիայի դէմ մղուող պայքարում»²¹:

Լոնտոնի մէջ Ռուսիոյ դեսպան Կոմս Ա. Կ. Պենքընտորֆ Ռուսիոյ կողմէ առաջարկուած ազդարարագիրը փոխանցեց Անգլիոյ արտաքին գործոց նախարար Էտուրտ Կրէյքին: Հաւանաբար իրազեկ դառնալէ ետք թէ վանի հայերուն ինքնապաշտպանութիւնը ապստամբութիւն մը չէր՝ այլ հետեւանքը կոտորածներուն՝ Մեծն Բրիտանիան որոշեց շարժիլ ոչ որպէս պատասխան մը Գէորգ Ե. Կաթողիկոսի աղերսական հեռագիրին՝ այլ ընթացք տալու համար Համաշխարհային Առաջին Պատերազմի իր դաշնակիցին՝ Ռուսիոյ պահանջին: Արդարեւ, ինչպէս կը վկայեն փաստաթուղթերը, Ռուսիոյ դեսպանը պնդեց իր Կրէյքի մօտ, թէ իր կառավարութիւնն անձկագին կը փափաքէր ունենալ հրապարակային յայտարարութիւն մը գոհացնելու համար Ռուսիոյ հայկական հանրային կարծիքը²²:

Մինչ այդ, սակայն, Արեւմտեան Հայաստանի կարգ մը շրջաններուն մէջ սկսան տեղահանութիւնները եւ ջարդեր տեղի ունեցան Կարինի, Խնուսի եւ Մամախաթունի մէջ²³:

Քսան Մայիսին Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սազոնովը յայտնեց Ֆրանսայի մէջ Ռուսիոյ դեսպանին, թէ Մեծն Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար Կրէյքը ընդունած էր հայկական ջարդերուն առնչուող միացեալ յայտարարութիւնը, գոր պատրաստած էր Ռուսիոյ արտաքին գործերու նախարարութիւնը՝ հրապարակել Լոնտոնի մէջ՝ համաձայնութենէն ետք Ֆրանսական կառավարութեան, եւ առ այդ՝ ինչորեք արագացնել անոր ձեռք բերումը²⁴: Սակայն տրուած ըլլալով որ անգլիական եւ ֆրանսական կայսրութիւններն ունէին իսլամական մեծ բնակչութիւն՝ Փարիզի մօտ Մեծն Բրիտանիոյ դեսպան Սըր Ֆ. Պերթիի թելադրանքով յայտարարութեան ռուսական կողմէ առաջարկուած նախագիծէն վերցուեցաւ այն ակնարկութիւնը թէ Թուրքիոյ այս ոճիրները կը գործուէին «քրիստոնեաներուն դէմ»²⁵: Իրականութեան մէջ՝ յայտարարութեան ֆրանսերէն պատճէնը ունէր «Թուրքիոյ կողմէ գործադրուած այս նոր ոճիրները ընդդէմ մարդկութեան եւ քաղաքակրթութեան» արտայայտութիւնը²⁶:

Ի վերջոյ, 22 Մայիս 1915ին, Եռեակ Համաձայնութեան դաշնակիցները յայտարարեցին Օսմանեան կայսրութեան վարիչներուն, թէ պատերազմի աւարտին անձնապէս պատասխանատու պիտի նկատուէին հայոց հանդէպ իրենց կատարած կոտորածներուն համար:

Ստորեւ այդ հրապարակային յայտարարութիւնը, որ 24 Մայիսին Կոստանդնուպոլսոյ ամերիկեան դեսպան Հենրի Մորկընթոյի ձեռամբ ներկայացուեցաւ Բարձրագոյն Դրան²⁷:

«Գրեթէ վերջին ամսուան ընթացքին, քիւրտերը եւ Հայաստանի թուրք բնակչութիւնը լծուած են հայերը ջարդելու՝ օսմանեան իշխանութեան գիտակցութեամբ եւ յաճախ՝ օգնութեամբ: Ապրիլի կէսերուն նման ջարդեր

տեղի ունեցան էրզրումի, Դերջանի, Ակնի, Պիթլիսի, Սասունի, Մուշի, Ձէյթունի եւ ամբողջ Կիլիկիոյ մէջ:

«Վանի շրջակայքի շուրջ 100 գիւղերու բնակիչներուն ըստը սպաննուեցան: Բուն քաղաքին մէջ հայերուն թաղը պաշարուած է քիւրտերու կողմէ: Նոյն ատեն Կոստանդնուպոլսոյ օսմանեան կառավարութիւնը կատարած է անպաշտպան հայ բնակչութեան դէմ:

«Թուրքիոյ կողմէ գործադրուած այս նոր ոճիրներուն դէմ յանդիման՝ Դաշնակից Կառավարութիւնները հրապարակաւ կը յայտարարեն Բարձրագոյն Դրան, թէ Օսմանեան Կառավարութեան ըստը անդամները, ինչպէս նաեւ իրենց գործակիցներէն անոնք որոնք մասնակից են եղած՝ անձնապէս պատասխանատու պիտի նկատուին այս ջարդերուն համար»²⁸:

Օսմանեան Կայսրութեան կառավարութեան հակազդը եղաւ հայոց տեղահանութեան ծրագրին վաւերացումը ու հրապարակումը՝ յուշագրի ստացումէն երեք օր ետք, 27 Մայիս 1915ին, թերեւս իբր ինքնարդարացումը կատարուածին եւ աւելի ահաւոր կատարուելիքին²⁹:

Տեղահանութեան յայտարարութիւնը կատարուեցաւ արարքին սկսելէն ետք (ex-post facto): Ապրիլին տեղահանութիւններն արդէն սկսեր էին Ձէյթունի եւ անոր շրջակայքին, ապա 9 Մայիսին Թոքատի եւ Մայիսի կէսերուն ալ՝ էրզրումի շրջաններէն:

Յետագային՝ Սեւրի մէջ 10 Օգոստոս 1920ին կնքուած դաշնագիրը գորի միջի այլոց ստորագրեցին Օսմանեան Կայսրութեան եւ Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչները՝ ունէր յօդուած 230ը, որ կը ճշգէր թէ թրքական կառավարութիւնը պարտաւոր էր Դաշնակից Պետութիւններուն յանձնել ջարդերուն պատասխանատուները, իսկ Դաշնակիցներն իրենք իրենց կը վերապահէին դատարան մը կազմելով դատելու մեղադրեալները, եւ թէ այդ դատարանը պիտի ճանչցուէր թրքական կառավարութեան կողմէ:

Յօդուած 230ը կ'աւրնչուէր հայերու դէմ գործուած ոճիրներուն: Իրականութեան մէջ՝ Սեւրի դաշնագիրին այս յօդուածը եւ Դաշնակիցներուն 1915ի մայիսեան միացեալ յայտարարութիւնն էին որ նախընթաց ծառայեցին Համաշխարհային Երկրորդ Պատերազմի ոճրագործները դատելու սահմանուած Նիւրեմպերկի եւ Թոքիոյի հրովարտակներուն 6(գ) եւ 5(գ) յօդուածներուն՝ յաջորդաբար³⁰:

Հայոց պարագային, սակայն, Սեւրը թաղուեցաւ Լոզանի մէջ: Լոզանի դաշնագիրին կը պակսէր Սեւրի 230ին նմանող յօդուած մը: Ընդհակառակը, դաշնագիրին կցուած էր ներման յայտարարութիւն մը, որուն համաձայն ներուած էին ըստը այն յանցանքները որոնք գործուած էին 1 Օգոստոս 1914էն 20 Նոյեմբեր 1922ի միջեւ³¹:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ջ.Ս. Կիրակոսեան, *Առաջին Համաշխարհային Պատերազմը և Արեւմտահայոյրիւնը, 1914-1916 թթ.*, Երեւան, 1967, էջ 256-257:
2. Haigazn Kazarian, "The Turkish Genocide of the Armenians: A premeditated and official assault," *The Armenian Review*, vol. 30, No. 1-117, Spring, [Boston] 1977, pp. 13-15.
3. Նիւրնըր Հ.Յ. *Դաշնակցութեան Պատմութեան Համար* [Հ. Տասնապետեան, խմբ.] հուն. Ա., Պէյրութ, 1973, էջ 245:
4. Johannes Lepsius, *Rapport secret sur les massacres d'Armenie*, Paris, 1919, pp. 225-228.
5. Viscount Bryce, *The Treatment of the Armenians in the Ottoman Empire*, Beirut, 1972, p. 627. Այստիեանի՝ Bryce:
6. Joseph Green, *Leavening the Levant*, Boston, 1916, p. 45.
7. Henry Morgenthau, *Ambassador Morgenthau's Story*, New York, 1918, p. 297.
8. Վանի ինքնապաշտպանութեան մասին տես՝ Ջաւէն Մարրլեան, «Վանի 1915ի դիւցազնամարտի անփոփ պատմականը», *Զարթօնք*, Պէյրութ, 21-28 Ապրիլ 1965, էջ 2 յաջորդաբար:
9. *Հայաստանը Միջազգային Դիւանագիտութեան և Սովետական Արտաքին Քաղաքականութեան Փաստաթղթերում* [Ջ.Ս. Կիրակոսեան, խմբ.], Երեւան, 1972, էջ 368: Ասկէ ետք՝ *Հայաստանը Միջազգային*:
10. Նոյն, էջ 368-369: Տես նաեւ՝ F.O. 371/2488/51009.
11. *Հայաստանը Միջազգային*, էջ 369:
12. F.O. 371/2488/51010.
13. F.O. 371/2488/53073.
14. Նոյն:
15. Ռազմիկ Արզոյեան, «Պատմութեան դատի առջեւ», *Կանչ*, քիւ 238, Շաբաթ 21 եւ քիւ 239, Շաբաթ 28 Դեկտեմբեր 1996, Պէյրութ:
16. Նոյն, էջ 74:
17. F.O. 371/2488/55449.
18. Նոյն:
19. F.O. 371/2488/58387.
20. F.O. 371/2488/51009/59097.
21. *Հայաստանը Միջազգային*, էջ 375:
22. F.O. 371/2488/59097.
23. Մանրամասնութեանց համար տես՝ Լեւոն Վարդան, *Ժամանակագրութիւն Հայկական Տասնհինգի, 1915-1923*, Պէյրութ, 1975, էջ 37:
24. *Հայաստանը Միջազգային*, էջ 376:
25. F.O. 371/2488/51009/59205/63095/63903.
26. Մանրամասնութեանց համար տես՝ Zaven Messerlian, "A United Nations report in 1948 related to the Armenian genocide," *Հասկ Հայագիտական Տարեգիրք*, Նոր Շրջան Բ.-Գ. տարի, Անթիլիաս-Լիբանան, 1981-1982, էջ 465-475: Այստիեանի՝ Messerlian:
27. U.S.A., Department of State, *Foreign Relations of the United States, 1915, Supplement*, Washington, D.C., 1928, pp. 981-982.
28. F.O. 371/2488/9312.
29. Bryce, pp. 659-660.
30. Messerlian, p. 475.
31. Նոյն:

Զ.Մ.

THE TELEGRAM OF CATHOLICOS
GEVORK THE FIFTH
AND THE MAY 1915 DECLARATION
OF THE ENTENTE POWERS
(Summary)

ZAVEN MESSERLIAN

Making use of the documentary and official materials especially of the British Foreign Office, the article endeavours to bring to light the why and how of the publication of 24 May 1915 declaration of the Entente Powers in face to the facts of the Ottoman atrocities and massacres of Armenians just at the beginning of the First World War, after Gevorg the Fifth, the Catholicos of All Armenians, appealed to the British, Russian, French, Italian and other potentates of the time. According to the givens and their analysis, the author concludes that the united declaration of the Great Powers was not made to impede and stop, if possible, the deportation and massacres of the Armenian population of the Ottoman Empire, but rather to encourage the Armenians in the Caucasus and various regions of the Russian Empire to bring help to the war efforts of that Empire.

The author also concludes that the article 230 of the Treaty of Sèvres, which dealt with the problem of war criminals, but was left aside when the Treaty of Lausanne was signed between the Entente Powers and Turkey, was the basis for the later publication of the Nuremberg and Tokyo declarations (articles 6c and 5c respectively) at the end of the Second World War. In fact, the Treaty of Lausanne included an appendix which declared pardoned all crimes committed between 1 August 1914 and 20 November 1922.